**«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր**
**«Իմացումի հրճվանք» ծրագիր**
**Ես և շրջակա աշխարհը**

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է սովորողների մեջ ձևավորել շրջապատի նկատմամբ ուշադիր լինելու, հետազոտելու, խնամելու, պահպանելու, բարեկարգելու կարողությունները, նպաստել հաղորդակցվելու, համագործակցելու, շրջապատող մարկանց նկատմամբ հարգալից լինելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: «Ես և շրջակա աշխարհը» առարկան սերտորեն կապված է «Իմացումի հրճվանք» ծրագրով նախատեսված մյուս առարկաների հետ: Ծրագիրն ընգրկում է ուսումնական տոնացույցով նախատեսված օրերի թեմաները, որոնք սերտորեն կապված են Իմացումի հրճվանքի մյուս բաղադրիչների հետ:
1-4-րդ դասարանում «Ես և շրջակա աշխարհը» առարկան ներառում է «Ինձ շրջապատող մարդիկ», «Բնագիտություն», «Տիեզերք», «Բույսերի և կենդանիների խնամք», «Անվտանգ երթևեկություն», «Առողջություն» դասընթացները
«Ես և շրջակա աշխարհը» առարկան

1. Նպաստում է սովորողների դիտողականության, շրջապատում օրինաչափություններ նկատելու դիտարկելու, վերլուծելու կարողության զարգացմանը:
2. Նպաստում է սովորողների ինքնաճանաչման, ինքնադրսևորման ու ինքնակազմակերպման հմտությունների զարգացմանը:
3. Ձևավորում է առողջ, անվտանգ ապրելակերպին նպաստող վարքագիծ:
4. Ձևավորում է շրջապատի, բնության հանդեպ հոգատար վերաբերմունք:
5. Նպաստում է երևույթներին հետևելու, հետևություններ անելու հմտությունների ձևավորմանը:
6. Հետազոտության, փորձի միջոցով իրեն անհրաժեշտ ինֆորմացիան ձեռք բերելու կարողությունների ձևավորմանը :

1. Ինձ շրջապատող մարդիկ
   - Ես, իմ տունը, իմ ընտանիքը, իմ ընկերները
   - Իմ թաղը, բակը /որտեղ եմ ապրում/
   - Ծեսեր, տոներ, միջոցառումներ
2. Բնագիտություն
   - Կենդանի և անկենդան բնություն
   - Բնագիտական փորձեր
   - Եղանակային փոփոխություններ
   - Օրացույց
3. Տիեզերք
   - Արև, լուսին
4. Բույսերի և կենդանիների խնամք
   - Բույսերի տնկում, խնամք
   - Կենդանիների խնամք
   - Ծառատունկ, ծաղկատունկ
   - Բակ-պարտեզի խնամք
5. Անվտանգ երթևեկություն
   - Անվտանգ երթևեկության տարրական կանոններ

6. Առողջություն
   - Անձնական հիգիենա
   - Առողջ սնունդ, մարզանք
   - Վատ սովորությունների դեմ պայքար
   - Անվտանգությունը տանը և դրսում

Ուսումնական գործունեություն, որն իրականացվում է կրտսեր դպրոցում
- Խնամում է ծաղիկները, ծառերը, կենդանիներին և թռչուններին
- Դիտարկումներ և բնագիտական փորձեր է կատարում, հետևում է արդյունքերին, հետևություններ անում
- Դիտարկումներ, հաշվառումներ է կատարում, կազմում բույսի, կենդանու անձնագիր, գրանցում փոփոխությունները
- Որոշ բնագիտական հետևություններ և դատողություններ է կատաում բնության մեջ կատարվող երևույթների, փոփոխությունների վերաբերյալ
- Ներկայացնում է բնության որոշ երևույթների առաջացման պայմաններն ու պատճառները՝ ձյուն, անձրև, քամի...

**Նախագծային աշխատանքներ**
Ուսումնական գործունեությունն իրականացվում է նախագծերի միջոցով: Նախագծի թեմաներն ընտրվում են ինչպես ուսումնական օրացույցից, այնպես էլ առարկայի մեջ ընդգրկված դասընթացներից: Թեման, առարկայական դասընթացը կարող են որպես նախագիծ իրենց շուրջը հավաքել «Իմացումի հրճվանք» ծրագրի մեջ ընդգրկված մյուս առարկաները, այնպես էլ դառնալ որևէ այլ նախագծի բաղկացուցիչ:

**Ուսումնական ճամփորդություններ**
Ուսումնական ճամփորդությունը ծրագրի բաղկացուցիչ է:
Ճամփորդություններն ինքնանպատակ չեն, դրանք ուղղված են սովորողների ճանաչողությանը, գիտելիքների ձեռքբերմանն ու զարգացմանը: Ճամփորդություն իրականացնելուց առաջ նախապես պլանավորում ենք մեր անելիքները: Սովորողներին հանձնարարվում է ուսումնական, հետազոտական աշխատանք՝ ուսումնասիրել և տեղեկություններ հավաքել այն տարածքի մասին, որտեղ պետք է այցելել:
Նախապես կատարում ենք աշխատանքի բաժանում. մի խումբը ընթացքում պետք է գծի ճանապարհի քարտեզը, մի խումբը՝ ժամանակին հետևի, մյուսները հարցազրույց վերցնեն տեղի բնակիչներից...

Ուսումնական ճամփորդության ամփոփումն իրականացվում է հետևյալ սկզբունքով՝
- *ինչ գիտեի,*
- *ինչ չգիտեի,*
- *ինչ իմացա*
- *ինչ հարցեր ունեմ:*

Վերադառնալուց հետո ճամփորդությունն ամփոփվում է ֆոտոշարքով, ֆիլմով, ռադիոլուրով, որոնք հրապարակվում են դպրոցի ենթակայքում, բլոգում: